

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ



Սիրելի՛ համաքաղաքացիներ,

Շնորհավորում եմ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով:

Ցանկանում եմ, որ նոր՝ 2018 թվականը, երջանկության, սիրո ու համերաշխության նոր լիցքեր բերի բոլոր ընտանիքներին, որ իրականանան բոլոր նվիրական երազանքներն ու ցանկությունները, որ ետևում մնան դժվարություններն ու

ամենօրյա հոգսերը, ու սեփական ուժերի հանդեպ վստահության զգացումով նոր գործեր ձեռնարկենք և ուրախանանք մեր հաջողություններով:

Աշտարակը մեր տունն ու մեր ընտանիքն է: Մեկս մյուսին օգնելով և միահամուռ ուժերով շենացնենք մեր սիրելի քաղաքն ու մեր երկիրը:

Կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիս՝ Ամանորի ու Սուրբ Ծննդյան տոների առիթով: Թող Սուրբ Ծննդյան լույսն ու Աստծո օրհնությունն ուղեկցեն ամբողջ տարվա ընթացքում:

Մաղթում եմ առողջություն, անձնական երջանկություն և ամենայն բարիք:

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ